

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ 2011 Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել են 18 ուսումնական ձեռնարկ, 12 մենագրություն, 6 դասախոսության տեքստ, 352 գիտական հոդված, 105 ուսումնամեթոդական աշխատանք, 1 բառարան, 1 խնդրագիրք (2010 թվականին հրատարակվել է 2 դասագիրք, 28 ուսումնական ձեռնարկ, 11 մենագրություն, 16 դասախոսության տեքստ, 303 գիտական հոդված, 114 ուսումնամեթոդական աշխատանք, իսկ 2009 թ.՝ 34 ուսումնական ձեռնարկ, 15 մենագրություն, 2 դասագիրք, 18 դասախոսության տեքստ, 328 գիտական հոդված, 56 ուսումնամեթոդական աշխատանք (տե՛ս աղյուսակ 1)): Արտերկրի գիտական հանդեսներում հրատարակված հոդվածների թիվը կազմել է 32 (2010 թ. հրատարակվել է 41, իսկ 2009 թ.՝ 25 հոդված):

Նախապատրաստվել և ներկայացվել է ՀՀ անկախության 20-ամյակի կապակցությամբ հրատարակման պարտրաստվող հանրագիտարանի տնտեսագիտության բաժանմունքի նյութը:

#### Ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել 41 թեմաներով՝ որոնցից 40-ը՝ ամբիոնային և 1-ը՝ բյուջետային ֆինանսավորմամբ: Այդ աշխատանքները վերաբերում են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բանասիրության առավել արդիական, գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին: Ստացվել են գիտական որոշ արդյունքներ տարածքային կառավարման և համաչափ զարգացման հայեցակարգային բարելավման, կառավարչական հաշվառման մեթոդաբանության և կենսաթոշակային համակարգի կատարելագործման, տնտեսական բարեփոխումների սիներգետիկայի,

մրցունակության գնահատման չափանիշների կատարելագործման, աշխատանքի շուկայի ու զբաղվածության ոլորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում աշխատանքի առաջարկի գնահատման, ծառայությունների ոլորտի պայմանագրային հարաբերությունների բարելավման, ռազմավարական կառավարման, երկրորդային ռեսուրսների օգտագործման էկոլոգոտնտեսական ապահովման ոլորտներում:

2011 թվականի ընթացքում՝ ըստ ժամանակացույցի, ամբիոններում զգալի աշխատանք է կատարվել սեմինարների, կլոր սեղանների և գիտական բանավեճերի ուղղությամբ («Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում», «Ֆինանսական հաշվառում», «Աշխատանքի տնտեսագիտություն», «Մակրոէկոնոմիկա», «Կորպորատիվ ֆինանսներ», «Փիլիսոփայություն», «Օտար լեզուներ», «Հայոց և ռուսաց լեզուներ», «Առաջին բուժօգնություն և քաղաքաշտպանություն» ամբիոններ):

Կարևորելով համալսարանի ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքների վիճակը՝ 2011 թվականի նոյեմբերի 2-7-ը տեղի է ունեցել համալսարանի ամբիոնների 2011 թվականին կատարած գիտահետազոտական աշխատանքներին վերաբերող հաշվետվությունների լսումներ, ընթացքում վերլուծվել է գիտահետազոտական աշխատանքների թեմաների արդիականությունը, դրանց երկրի առջև ծագած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին համահունչ լինելը, միջամբիոնային համագործակցությունը, պրոֆեսորադասախոսական կազմի ընդգրկվածության աստիճանը գիտահետազոտական աշխատանքներում, դրամաշնորհային ծրագրերի, գիտական համաժողովների, սեմինարների, կլոր սեղանների, գիտական բանավեճերի մասնակցությունը: Առավել աչքի են ընկել միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման, բնօգտագործման տնտեսագիտության, տնտեսական աշխարհագրության, փիլիսոփայության, կառավարման տեղեկատվական համակարգերի ամբիոնները:

Ամբիոններում կան նաև թերություններ՝ բացակայում են ամբիոնների միջև փոխհամագործակցությունը, նեղ է թեմաների ընտրությունը, իսկ երբեմն հեռու գործնական կիրառությունից, հետազոտությունների արդյունքները չեն հրապարակվում ու ներկայացվում շահագրգիռ պետական մարմիններ կամ մասնավոր հատվածի կազմակերպություններ, որոշ ամբիոններում ցածր է անձնակազմի ընդգրկվածությունը, ինչով չի կատարվում 2010 թվականի նոյեմբերի 5-ի գիտական խորհրդի որոշումը:

## Բյուջետային ֆինանսավորվող թեմաներ

2011 թվականին համալսարանում կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորման մեկ թեմա՝ **«ՀՆԱ ծավալի և աճի տեմպերի վրա գիտության և կրթության ազդեցության գնահատումը»:**

2011 թվականին համալսարանի 11 ամբիոններ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե են ներկայացրել ՀՀ բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 12 թեմաների կատարման հայտեր, մեկական հայտ ներկայացրել են նաև համալսարանի Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերը: Այնուհանդերձ, ներկայացված 14 հայտերից ոչ մեկը չի ֆինանսավորվել: Ներկայացված թեմաներն ընդգրկում էին հետևյալ հիմնախնդիրները՝ ՀՀ-ում տնտեսական աճի որակի գնահատում, ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծություն և կանխատեսում, մարզերի բիզնես-միջավայրի և շուկայի մրցակցության մակարդակի հետազոտում, գնահատում և կանխատեսում, տարածքային կառավարման և համաչափ զարգացման հայեցակարգային բարելավում, արժեթղթերի շուկայի և տնտեսական աճի փոխազդեցության հիմնախնդիրների, կազմակերպությունների ֆինանսական կառավարում կատարելագործում, ՀՀ ընկերությունների միջազգայնացման մարքեթինգային հիմնախնդիրների, բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման հիմնախնդիրներ, փոքր և միջին բիզնեսի զարգացման հիմնախնդիրներ և հայ կառավարչական մտքի հետազոտական աշխատանքների իրականացում:

2012 թվականի համար ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտե է ներկայացվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորման 4 թեմա, որոնցից 2 թեմայի՝ «Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունը և կանխատեսումը ՀՀ-ում» և «Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական ու սոցիալական զարգացման վրա», ֆինանսավորումը նախատեսված է 2012 թ. պետական բյուջեով:

Նախապատրաստական աշխատանքներ են կատարվել 2012 թվականի հունիսին «Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները» խորագրով միջազգային գիտագործնական համաժողով կազմակերպելու ուղղությամբ, այդ նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտ է ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե:

## Գիտաժողովներ

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում կազմակերպվել են հետևյալ գիտաժողովները.

**2011թ. հունիսի 28-30-ը Աղվերանում** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանների հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել է միջազգային գիտաժողով՝ **«Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները»** խորագրով: Գիտաժողովին մասնակցություն են ցուցաբերել նաև Հայաստանի առաջատար բուհերի, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտական ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ներկայացուցիչները: Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են 2 բաժանմունքներով, որտեղ ներկայացվել են 125 գիտական հոդված:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ներկայացվել են մի շարք միջազգային զեկույցներ: Սակայն նվազել է միջազգային հրատարակումների քանակը՝ կազմելով հրատարակված գիտական հոդվածների 9,2%-ը, նախորդ տարվա 13,5%-ը փոխարեն:

2011 թվականի մայիսին պրոֆեսոր Ա.Սալնազարյանը, դոցենտ Ս.Պողոսյանը և դասախոս Տ.Պետրոսյանը մասնակցել են ՀՀ-ում բազմաստիճան կրթաթոշակային համակարգի ներդրմանը նվիրված Խոսե Պինիերայի գիտական ժողովին:

ՀՊՏՀ «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» ամբիոնի ասիստենտ Ս.Միքայելյանը 2011 թ. մայիսի 23-29-ը մասնակցել է «Ֆինանսական կրթության միջազգային ցանցի» տարեկան ժողովին, 2011 թ. օգոստոսի 23-26-ը՝ Համաշխարհային բանկի կողմից Ֆրանսիայում կազմակերպված «Ֆինանսական գրագիտության մակարդակի չափմանը» նվիրված գիտաժողովին:

2011 թվականի հուլիսի 12-16-ը տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ Ա.Վարդանյանը Մեծ Բրիտանիայի Էքստեր քաղաքում մասնակցել է ICABEEP, IAREP և SABE միջազգային կազմակերպությունների կողմից համատեղ կազմակերպված «Վարքագծային տնտեսագիտություն և տնտեսական հոգեբանություն» միջազգային կոնֆերանսին:

Գիտության և որակի կառավարման վարչության պետ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ Գ.Նազարյանը համալսարանի 5 ասպիրանտների և ուսանողների հետ 2011 թվականի սեպտեմբերի 11-18-ը Դոնի Ռոստովում մասնակցել է Սևծովյան ավազանի Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների տնտեսագիտական համալսարանների ընկերակցության (ASECU) կողմից կազմակերպված ուսանողական տնտեսագիտական ամառային դպրոցի դասընթացներին:

2011 թվականի հոկտեմբերի 6-10-ը համալսարանի առաջին պրոռեկտոր Գ.Վարդանյանը և Գ.Նազարյանը Դոնի Ռոստովում մասնակցել են Ռոստովի պետական տնտեսագիտական համալսարանի հիմնադրման 80-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին, որոնց շրջանակներում մասնակցություն է ցուցաբերվել նաև «Անցած տնտեսական ճգնաժամը և հետագա զարգացման միտումները» խորագիրը կրող Սևծովյան ավազանի Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների տնտեսագիտական համալսարանների ընկերակցության (ASECU) 7-րդ միջազգային ֆորումին:

2011 թ. հոկտեմբերի 3-7-ը կառավարման տեղեկատվական համակարգերի ամբիոնի վարիչ Վ.Սարգսյանը զեկուցմամբ հանդես է եկել Իսպանիայի Ուելվա քաղաքում Օվիդեոյի համալսարանի կողմից աշխարհի 15 երկրների գիտնականների ներգրավմամբ կազմակերպված, «Տնտեսական կայունությունը և շրջակա միջավայրի պահպանությունը Միջերկրածովյան երկրներում» խորագիրը կրող ՆԱՏՕ-ի գիտաժողովին:

2011 թ. հոկտեմբերի 24-30-ը կառավարման տեղեկատվական համակարգերի ամբիոնի դոցենտ Ա.Սարգսյանը Իտալիայի Ֆլորենցիայի համալսարանում մասնակցել է «Համալիր կառավարման հիմնախնդիրները զանգվածային արտակարգ իրավիճակների դեպքում» խորագրով միջազգային գիտաժողովին՝ հանդես գալով «Բնապահպանական աղետների օպտիմալ վերահսկողությունն ու կառավարումը» թեմայով զեկուցմամբ: Իսկ նույն թվականի նոյեմբերի 10-14-ը վերջինս զեկուցմամբ հանդես է եկել Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում Սևծովյան անվտանգության հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպված գիտաժողովին՝ նվիրված «Էներգետիկ անվտանգությունն ընդլայնված Սևծովյան տարածաշրջանում - ազգային և միութենական մոտեցումներ» թեմայով:



ՀՊՏՀ «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» ամբիոնի ասիստենտ Գ.Հայրապետյանը 2010 թվականի նոյեմբերին Մադրիդում մասնակցել է ածանցյալ արժեթղթերի շուկայի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովին:

2011 թ. նոյեմբերի 10-11-ը միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ Դ.Գալոյանը մասնակցել է «Արևելյան գործընկերություն. զարգացումների ներքաղաքական և եվրոպական համատեքստը» թեմայով Երևանում միջազգային գիտաժողովին:

### **Ծրագրերի և օրենսդրական նախաձեռնությունների նախագծերի քննարկում**

2011 թ. փետրվարին մշակվել և ՀՀ ԿԳ նախարարություն է ներկայացվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի» նախագիծը:

2011 թ. ապրիլին ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել համալսարանի առաջարկություններն ու դիտողությունները «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ:

2011 թ. հոկտեմբերին ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև երկարատև (մինչև 2020 թվականը) տնտեսական համագործակցության ծրագրի հայեցակարգ»-ի նախագծի վերաբերյալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առաջարկություններն ու նկատառումներ:

## Գիտական կապեր և համագործակցություն

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է Ռոստովի պետական տնտեսագիտական և Հարավային դաշնային համալսարանների (Ռուսաստանի Դաշնություն), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հետ գիտատեխնիկական համագործակցությունը:

## Ուսանողական գիտական միջոցառումներ

Համալսարանի ուսանողների մասնակցությունը համալսարանի գիտական կյանքին դրսևորվել է հետևյալ միջոցառումներով.

2011թ. ապրիլին մագիստրոսների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման նպատակով մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է գիտաժողով և լավագույն աշխատանքները ներկայացվել են հրատարակման:

2011թ. ապրիլ-մայիս ամիսներին ֆակուլտետներում և մասնաճյուղերում անցկացվել է համալսարանի ՈԻԳԸ 33-րդ նստաշրջանի առաջին փուլը:

2011 թ. հոկտեմբերին համալսարանի 4 ուսանողների աշխատանքները ներկայացվել են Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում ՀՀ սփյուռքի նախարարության և Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից կազմակերպվող «Կտոր մը Հայրենիք» երիտասարդական գիտական հետազոտությունների մրցանակաբաշխությանը, որի արդյունքներն առայժմ ամփոփված չեն:

2011 թ. նոյեմբերի 18-ին համալսարանի ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության IV կուրսի 3 ուսանողներ Հայրենական (սլավոնական) համալսարանում մասնակցել են «Գլոբալացում. զարգացման հիմնախնդիրները և այլընտրանքները» ուղղությամբ երիտասարդական Եվրասիական տնտեսական ֆորումի III փուլի բացմանը նվիրված «Համաշխարհային ֆինանսական համակարգի զարգացման խնդիրներն ու հեռանկարները» թեմայով կլոր սեղանի քննարկումներին:



## Որակի կառավարմանն ուղղված միջոցառումներ

Համալսարանում մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացների ներդրման նպատակով վարչության նախաձեռնությամբ և ֆակուլտետներում ու մասնագիտական ամբիոններում նշանակված որակի ապահովման պատասխանատուների ակտիվ մասնակցությամբ իրականացվել է «Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ)» հիմնադրամի կողմից մշակված 1-ին, 2-րդ և 3-րդ հարցաշարերի նախնական լրացում, որի գլխավոր նպատակը համալսարանի սպասվելիք հավատարմագրման գործընթացի համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ձևավորումն է: Էլեկտրոնային հարցաշարերում մուտքագրված տեղեկատվությունն առնչվում է համալսարանի ընդհանուր և ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների, նյութատեխնիկական ապահովվածությանը, գրադարանային ֆոնդին, գործող մասնագիտություններին ու դրանց մասնագիտացումներին, կրթական և առարկայական ծրագրերին, մասնագիտական ամբիոններում ներգրավված պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքային փորձին, նրանց իրականացրած ուսումնամեթոդական և գիտական աշխատանքներին, մասնակցությանը ներհանրապետական և միջազգային գիտաժողովներին, ուսանողների թվին, առաջադիմությանն ու ակադեմիական շարժունությանը և այլն:

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում համալսարանում որակի ներքին ապահովման գործուն համակարգի ձևավորման նպատակով համալսարանը դիմել է «Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում» դրամաշնորհային ծրագրին, որի արդյունքներն առայժմ չեն ամփոփվել:

Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել և համալսարանում կիրառել որակի ապահովման մեխանիզմներ ու ընթացակարգեր, որոնք ուղղված կլինեն համալսարանում մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների ներդրմանը՝ սահմանված բոլոր 7 բաղադրիչների ուղղությամբ:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ



ՄԱՍՆԱԳԻՏԱՅՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ